

Ջերմուկում մեկնարկեց Գյուղական համայնքների երրորդ համաժողովը

03-ը հոկտեմբերի, 2013թ.

<http://www.mta.gov.am/hy/news/item/2013/10/03/130/>

Ջերմուկում այսօր մեկնարկեց Գյուղական համայնքների երրորդ համաժողովը, որն աշխատանքները կշարունակի մինչև հոկտեմբերի 5-ը: Համաժողովի ընթացքում կքննարկվեն տեղական ինքնակառավարման համակարգի եւ գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրները՝ ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), մարզերում տարբեր ծրագրեր իրականացնող տեղական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների մասնակցությամբ: Յուրաքանչյուր մարզից համաժողովին մասնակցում է տասը համայնքապետ ու ավագանու հինգ անդամ:



Բացելով համաժողովը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը նշեց, որ արդեն երրորդ անգամ անցկացվող միջոցառումն արդյունավետ հարթակ է՝ ոլորտում գործող բոլոր դերակատարների երկխոսության, իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ու փորձի փոխանակման համար: "Համաժողովի մասնակիցները հնարավորություն ունեն նաև ոլորտի անմիջական պատասխանատուներից տեղեկանալ իրականացվող բարեփոխումների եւ որդեգրված քաղաքականության մասին", -նշեց նա: Վ. Տերտերյանը կարևորեց, որ երրորդ համաժողովին, համայնքապետերից բացի, մասնակցում են նաև ավագանու անդամներ, քանի որ համաժողովի ընթացքում քննարկվելու են նաև ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր:

Համաժողովը հյուրընկալող Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը ողջունեց եւ արդյունավետ աշխատանք մաղթեց մասնակիցներին: Նա նկատեց, որ Գյուղական համայնքների համաժողովը Ջերմուկում արդեն ավանդաբար անցկացվող միջոցառումների շարքում իր ուրույն տեղն ունի: "Մենք սիրով ենք հյուրընկալում համաժողովը, քանի որ այն հրաշալի հնարավորություն է ընձեռում քննարկելու ոչ միայն գյուղական համայնքների, այլև տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ինստիտուցիոնալ խնդիրները",-նշեց մարզպետը:

Համաժողովի շրջանակում կկազմակերպվեն համայնքների կայուն զարգացման խնդիրներին վերաբերող հետեւյալ տասը թեմատիկ կլոր սեղանները.

1. Տեղական ինքնակառավարման ոլորտ . Վարչատարածքային բարեփոխումներ, համայնքների խոշորացման գործընթաց, տեսլական եւ արդյունավետություն:

2. Ստուգումներ եւ վարչական հսկողություն. Տեղական ինքնակառավարման մարմիններում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների (հսկողության, վերահսկողության) եւ վարչական հսկողության գործընթացի կանոնակարգում, վարչարարության հիմունքները եւ վարչական վարույթը համայնքներում:

3. Գնումների գործընթաց . ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգում:

4. Մրցակցային համայնք. Համայնքների զարգացումը, մրցակցային համայնքի տեսլականը, համայնքների 4-ամյա զարգացման պլանները եւ դրանց իրավական կարգավորումները:

5. Շրջակա միջավայր. Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարում, բարելավման ծրագրեր, խնդիրներն ու լուծման առաջարկները:

5*. Շրջակա միջավայր. «Գյուղական համայնքների ներկա բնապահպանական իրավիճակը, բնական ռեսուրսները, բնության հուշարձանները, դրանց ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»:

6. Զբոսաշրջություն, տնտեսական զարգացում. Զբոսաշրջությունը որպես գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոն, համայնքային բրենդի ձևավորումը, զարգացումը եւ խթանումը, համայնքների մրցակցային առավելությունները, ներկա իրավիճակը, խնդիրները եւ լուծման առաջարկները:

7. Գյուղատնտեսություն. Գյուղատնտեսական քաղաքականությունը, օրենսդրական բացերը եւ անհրաժեշտ փոփոխությունները, գյուղացիական տնտեսությունների ներկա իրավիճակը, խնդիրները եւ լուծման առաջարկները:

8. Տեղական ինքնակառավարման ոլորտ. Համայնքի ավագանու գործունեությունը, թափանցիկությունը, իրավասությունների շրջանակը, "Ավագանու ինստիտուտ"-ի ձևավորումը, ընթացիկ խնդիրները եւ լուծման առաջարկները:

9. ՓՄՁ զարգացումը Հայաստանում. Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացումն ու ներկա օրենսդրությունը, գործարարությունը տեղական մակարդակում, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի աջակցությունը:

10. Հողերի կառավարում . ՀՀ գյուղական համայնքներում հողային օրենսդրության պահանջներին համապատասխան վերահսկողության իրականացման ընթացքում առկա խնդիրների վերհանում եւ դրանց լուծման ուղիները:

Այս տարի համաժողովի շրջանակներում կկազմակերպվեն նաեւ մարզական միջոցառումներ. մարզերի թիմերը կմասնակցեն շախմատի եւ նարդու մրցաշարերին, ինչպես նաեւ "Ինչ, որտեղ, երբ" ինտելեկտուալ խաղ-մրցույթին:

ՏԿՆ, Հասարակայնության հետ կապերի բաժին

Վարչապետը Ջերմուկում մասնակցել է համայնքների խնդիրների քննարկման նպատակով հրավիրված համաժողովին

04-ը հոկտեմբերի, 2013թ.

<http://www.gov.am/am/news/item/10747/>

Վարչապետ Տիգրան Սարգսյանը Ջերմուկում մասնակցել է հոկտեմբերի 3-ից մեկնարկած Գյուղական համայնքների երրորդ համաժողովի աշխատանքներին: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ կառավարության ղեկավարը կարևորել է նման միջոցառումների անցկացումը և նշել. «Մեզ մեծապես հետաքրքրում են տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները, և դրանց լուծման ուղղությամբ ձեր առաջարկությունները: Տեղյակ եք, որ կառավարությունը հաստատել է 2014 թվականի պետական բյուջեի նախագիծը: Այդ տեսակետից, մեզ հետաքրքրում է, թե ինչպիսին է վիճակը ավագանիներում, ինչ խնդիրներ եք տեսնում, ինչ հարցեր են լուծվել, ինչպես է վիճակը աշխատավարձերի բարձրացման քաղաքականության տեսակետից: Տեղյակ ենք, որ շատ համայնքներում կա ֆինանսական միջոցների սղություն»:



Վարչապետը վստահեցրել է համայնքների ղեկավարներին, որ կառավարությունն անում է ամեն ինչ, որպեսզի պետական բյուջեով հնարավորություն լինի օժանդակել համայնքներին՝ աշխատավարձերի բարձրացումը մեր երկրում սահուն կազմակերպելու համար: «Աշխատավարձերի բարձրացումը պետք է կրի շարունակական բնույթ: Պետք է ունենանք աշխատավարձերի բարձրացման համար առաջիկա հինգ տարիների ռազմավարություն: Կառավարության ծրագրով մեր երկրում նվազագույն աշխատավարձը փուլ առ փուլ բարձրացվելու է, մտադիր ենք

մինչ 2017 թվականն այն հասցնել 70 հազար դրամի, այսինքն նվազագույն աշխատավարձը շոշափելիորեն կբարձրանա»,- նշել է Տիգրան Սարգսյանը: Վարչապետը վստահեցրել է, որ կառավարությունն այսուհետև ևս անելու է ամեն ինչ՝ տեղական ինքնակառավարման մարմինների զարգացմանը նպաստելու համար և համաժողովի մասնակիցներին մաղթել է բեղմնավոր աշխատանք: Մինչ հոկտեմբերի 5-ը շարունակվող համաժողովի ընթացքում կքննարկվեն տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների արդիական խնդիրները՝ ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզերում տարբեր ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների մասնակցությամբ: Յուրաքանչյուր մարզից համաժողովին մասնակցում են տասը համայնքապետ ու ավագանու հինգ անդամ:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Վայոց ձորի մարզ

05-ր հոկտեմբերի, 2013թ.

<http://www.president.am/hy/press-release/item/2013/10/05/President-Serzh-Sargsyan-visit-Jermuk/#!officialPhotos>

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր աշխատանքային այցով մեկնել է Վայոց ձորի մարզ: Հանրապետության Նախագահը Ջերմուկ քաղաքում մասնակցել է ս.թ. հոկտեմբերի 3-ից մեկնարկված Գյուղական համայնքների 3-րդ համաժողովին, որի ընթացքում քննարկվել են տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրները՝ ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), մարզերում տարբեր ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների մասնակցությամբ:



Համաժողովի ընթացքում հնչած զեկույցներից հետո տեղի է ունեցել մտքերի փոխանակում համայնքների արդյունավետ կառավարմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումների, ակնկալվող արդյունքների ու խնդիրների վերաբերյալ: Հանրապետության Նախագահն ընդգծել է, որ իրականացվելիք բարեփոխումների հիմքում պետք է առաջին հերթին դիտարկել բնակիչների հարմարավետությունը, նրանց կենցաղային պայմանների բարելավումը, համայնքներում կրթական, առողջապահական և այլ ծառայությունների որակյալ մատուցումը: Նախագահի համոզմամբ, վարչատարածքային բարեփոխումների

առավելությունները պետք է տեսանելի լինեն բնակիչներին, որոնց ցանկության պարագայում էլ բարեփոխումները կարող են առաջ ընթանալ:

Նախագահ Սերժ Սարգսյանն այնուհետև այցելել է «Ջերմուկ ռեզորթ» հանգստյան տան շինհրապարակ, ծանոթացել իրականացված ներդրումներին, ընթացիկ աշխատանքներին, որոնք, ըստ ծրագրի, կավարտվեն 2014թ. տարեվերջին: Հանրապետության Նախագահին զեկուցել են նաև Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրերի ընթացքի մասին:

ՀՀ Նախագահի մամուլի գրասենյակ

Գյուղական համայնքների երրորդ համաժողովն ամփոփեց աշխատանքները

05-ր հոկտեմբերի, 2013թ.

<http://www.mta.gov.am/hy/news/item/2013/10/05/134/>

Հոկտեմբերի 5-ին Ջերմուկում աշխատանքներն ամփոփեց Գյուղական համայնքների երրորդ համաժողովը, որի ավարտին մամուլի ասուլիսով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

«Համաժողովը լավ հնարավորություն էր ՏԻՄ-երին ներկայացնելու ոլորտում ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին որդեգրած քաղաքականության հիմնական շեշտադրումները, խոշոր ծրագրերը, օրենսդրական նախաձեռնությունները եւ լսելու նրանց կարծիքները՝ գործնականում դրանց կիրարկման հնարավոր ռիսկերի եւ դրական ազդեցությունների վերաբերյալ», -ասաց Վաչե Տերտերյանը՝ ավելացնելով, որ այս տարի, բացի համայնքների ղեկավարներից, համաժողովին մասնակցում էին նաեւ ավագանիների ներկայացուցիչներ: Նրա խոսքով, համաժողովը կարելու էր հատկապես համայնքապետերի համար՝ ներկայացնելու իրենց փորձը, ոլորտի փորձառու մասնագետների եւ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների հետ քննարկելու առկա խնդիրները:



Վ. Տերտերյանը նշեց, որ գույքագրվել են ՏԻՄ-երի կողմից բարձրացված բոլոր մտահոգություններն ու խնդիրները, որոնք առաջիկա տարվա ընթացքում կընդգրկվեն ՏԿ նախարարության թիրախների շարքում: «Համաժողովի հետ մենք

լուրջ ակնկալիքներ ենք կապում նաև հետագայում: Վստահ ենք, որ համայնքների ղեկավարներն այս տարիների փորձառությունը օգտագործելով՝ հաջորդ համաժողովների ժամանակ կբարձրացնեն ավելի գործնական հարցեր», -ասաց Վ. Տերտերյանը:

Համաժողովին մասնակցում էին պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզերում տարբեր ծրագրեր իրականացնող տեղական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզից համաժողովին մասնակցում է տասը համայնքապետ ու ավագանու հինգ անդամ:

Համաժողովը հյուրընկալեց նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին: ՀՀ նախագահը մասնակցեց եզրափակիչ՝ «Տեղական ինքնակառավարման ոլորտ . վարչատարածքային բարեփոխումներ, համայնքների խոշորացման գործընթաց, տեսլական եւ արդյունավետություն», իսկ ՀՀ վարչապետը՝ «Տեղական ինքնակառավարման ոլորտ. համայնքի ավագանու գործունեությունը, թափանցիկությունը, իրավասության շրջանակը, ընթացիկ խնդիրներն ու լուծման առաջարկները» խորագրով թեմատիկ քննարկումներին:

Համաժողովի շրջանակներում կազմակերպվեցին նաև մարզական միջոցառումներ. մարզերի թիմերը մասնակցեցին շախմատի եւ նարդու մրցաշարերին, ինչպես նաև «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղ-մրցույթին:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին